

**►B**

**Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ հրահանգ**  
**Ադտոտման համալիր կանխարգելման և հսկման վերաբերյալ**

(ՊՏ L 257, 10.10.1996թ., էջ 26)

**Փոփոխված՝**

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
<b><u>►M1</u></b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 156 թվականի մայիսի 26-ի 2003/35/ԵՀ հրահանգով	17		25.06.2003թ.
<b><u>▼M2</u></b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 275 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգով (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)	32		25.10.2003թ.
<b><u>▼M3</u></b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 284 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ)	1		31.10.2003թ.
<b><u>▼M4</u></b>	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 L 33 թվականի հունվարի 18-ի թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ)	1		04.02.2006թ.

**▼B**

**ԽՈՐՀՐԴԻ 1996 թվականի սեպտեմբերի 24-ի 96/61/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**  
**Ադտոտման համալիր կանխարգելման և հսկման վերաբերյալ**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130-րդ(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ([1](#)),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը ([2](#)),

գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան ([3](#)),

1. քանի որ Համայնքի բնապահպանական քաղաքականության նպատակներն ու սկզբունքները, ինչպես սահմանված է Պայմանագրի 130-րդ հոդվածում, հիմնականում վերաբերում են աղտոտման կանխարգելմանը, նվազեցմանը և, հնարավորության սահմաններում, վերացմանը՝ առաջնահերթություն տալով աղտոտման աղբյուրների նկատմամբ միջոցառումներ ձեռնարկելուն և բնական ռեսուրսների արդյունավետ կառավարում ապահովելուն՝ համաձայն «աղտոտողը վճարում է» և աղտոտման կանխարգելման սկզբունքներին համապատասխան,

2. քանի որ Շրջակա միջավայրի վերաբերյալ գործողությունների 5-րդ ծրագրում, որի ընդհանուր նախագիծը հաստատվել է Խորհրդի և Խորհրդի շրջանակներում հանդիպումներ անցկացնող անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչների կողմից՝ «Շրջակա միջավայրի և կայուն զարգացման մասով Համայնքի՝ քաղաքականության և գործողությունների ծրագրի մասին» 1993 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ (4), առաջնային նշանակությունը տրվում է աղտոտման համալիր հսկողությանը, որը կարևոր քայլ է՝ մի կողմից մարդկային գործունեության և սոցիալ-տնտեսական զարգացման ու մյուս կողմից՝ ռեսուրսների և բնության վերականգնողական կարողությունների միջև առավել կայուն հավասարակշռության հասնելու համար,

3. քանի որ աղտոտման նվազեցմանն ուղղված համալիր մոտեցման իրականացման համար Համայնքի մակարդակով պահանջվում են գործողություններ՝ արդյունաբերական ձեռնարկություններից աղտոտման կանխարգելման և հսկողության մասին Համայնքի գործող օրենսդրությունը փոփոխելու և լրացնելու նպատակով,

4. քանի որ Խորհրդի 1984 թվականի հունիսի 28-ի «Արդյունաբերական ձեռնարկություններից մթնոլորտի աղտոտման դեմ պայքարի մասին» 84/360/ԵՏՀ հրահանգով (5) ներմուծվել է ընդհանուր շրջանակ, որի համաձայն պահանջվում է թույլտվություն ստանալ՝ նախքան այն արդյունաբերական օբյեկտների շահագործումը կամ էական փոփոխությունը, որոնք կարող են հանգեցնել մթնոլորտի աղտոտմանը,

5. քանի որ «Համայնքի ջրային միջավայր արտանետված որոշակի վտանգավոր նյութերից առաջացող աղտոտման մասին» Խորհրդի 1976 թվականի մայիսի 4-ի 76/464/ԵՏՀ հրահանգով (6) ներմուծվել է այդ նյութերի արտանետման համար թույլտվության պահանջ,

6. քանի որ, թեպետ առկա է մթնոլորտի աղտոտման դեմ պայքարի և ջրային ռեսուրսներ վտանգավոր նյութերի արտանետումների կանխարգելման կամ նվազեցման մասին Համայնքի օրենսդրություն, դեռևս չկա հողային ռեսուրսներ արտանետումների կանխարգելման կամ նվազեցման վերաբերյալ Համայնքի համադրելի օրենսդրություն,

7. քանի որ օդ, ջրային կամ հողային ռեսուրսներ արտանետումների նկատմամբ հսկողության տարբեր մոտեցումների առանձին կիրառումը կարող է նպաստել ավելի շուտ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների միջև աղտոտման տեղափոխմանը,

քան ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պաշտպանությանը,

8. քանի որ աղտոտման նկատմամբ համապարփակ մոտեցման նպատակը օդ, ջրային կամ հողային ռեսուրսներ արտանետումները կանխարգելելն է, որտեղ դա գործնականորեն հնարավոր է՝ հաշվի առնելով թափոնների կառավարումը, իսկ որտեղ հնարավոր չէ, նվազեցնել այդ արտանետումները՝ շրջակա միջավայրի, ընդհանուր առմամբ, պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու նպատակով,

9. քանի որ սույն Հրահանգով սահմանվում է աղտոտման համալիր կանխարգելման և հսկողության համար ընդհանուր շրջանակ. քանի որ դրանով սահմանվում են, ընդհանուր առմամբ, շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ ապահովելու նպատակով աղտոտման համալիր կանխարգելում և հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներ. քանի որ աղտոտման հսկողության նկատմամբ համալիր մոտեցումը կխթանի կայուն զարգացման սկզբունքի կիրառումը,

10. քանի որ սույն Հրահանգի դրույթները կիրառվում են՝ չհակասելով «Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր նախագծերի ազդեցությունների գնահատման մասին» Խորհրդի 1985 թվականի հունիսի 27-ի 85/337/ԵՏՀ հրահանգի (7) դրույթներին. քանի որ այդ Հրահանգի կիրառման արդյունքում ստացված տեղեկությունները կամ եզրակացությունները պետք է հաշվի առնվեն՝ թույլտվություն տալու համար, սույն Հրահանգը չի ներգործում 85/337/ԵՏՀ հրահանգի իրականացման վրա,

11. քանի որ անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, որ I Հավելվածում նշված արդյունաբերական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձինք բավարարեն կոնկրետ հիմնական պարտավորությունների համար սահմանված ընդհանուր սկզբունքները. քանի որ, այդ իսկ նպատակով, բավարար է, որ իրավասու մարմինները թույլտվության պայմանները սահմանելիս հաշվի առնեն այդ ընդհանուր սկզբունքները,

12. քանի որ սույն Հրահանգի համաձայն ընդունված որոշ դրույթներ պետք է կիրառվեն գործող օբյեկտների նկատմամբ՝ սահմանված ժամանակահատվածից հետո, իսկ այլ ձեռնարկությունների նկատմամբ՝ սույն Հրահանգի կիրարկման ամսաթվից հետո,

13. քանի որ աղտոտման խնդիրներն առավել արդյունավետ և ռացիոնալ կերպով հաղթահարելու համար էկոլոգիական ասպեկտները պետք է հաշվի առնվեն օպերատորի կողմից. քանի որ այդ ասպեկտները պետք է ներկայացվեն իրավասու մարմին կամ մարմիններ, որպեսզի, մինչ թույլտվություն տալը, նրանք համոզվեն, որ նախատեսվել են աղտոտման կանխարգելմանը կամ հսկողությանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները. քանի որ թույլտվություն ստանալու ընթացակարգերի միջև չափազանց մեծ տարբերությունները կարող են հանգեցնել շրջակա միջավայրի պաշտպանության և իրազեկության տարբեր մակարդակների. քանի որ, այսպիսով, սույն Հրահանգի համաձայն թույլտվության դիմումները պետք է ներառեն անհրաժեշտ նվազագույն տվյալներ,

14. քանի որ տարբեր իրավասու մարմինների կողմից թույլտվության տրամադրման ընթացակարգի միջև լրիվ համակարգումը հնարավորություն կտա ընդհանուր առմամբ ապահովելու շրջակա միջավայրի պաշտպանության առավելագույն հնարավոր մակարդակ,

15. քանի որի իրավասու մարմինը կամ մարմինները թույլտվություն տրամադրեն կամ փոփոխություններ մտցնեն թույլտվության պայմաններում՝ օդի, ջրային և հողային ռեսուրսների աղտոտումից պահպանությանն ուղղված համալիր միջոցառումների առկայության դեպքում,

16. քանի որ թույլտվությունը պետք է ներառի բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են թույլտվության պայմանները կատարելու համար՝ այդպիսով նպաստելով ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակի ապահովմանը. քանի որ, չհակասելով թույլտվության ընթացակարգին, այդ միջոցների նկատմամբ նույնպես կարող են կիրառվել ընդհանուր պարտադիր պահանջներ,

17. քանի որ արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները, պարամետրերը կամ դրանց համարժեք տեխնիկական միջոցները պետք է սահմանվեն առկա լավագույն տեխնոլոգիաների հիման վրա՝ չնախատեսելով որևէ մեկ կոնկրետ մեթոդի կամ տեխնոլոգիայի կիրառումը և հաշվի առնելով համապատասխան օբյեկտի տեխնիկական բնութագրերը, տեղակայման աշխարհագրական վայրը և շրջակա միջավայրի տեղական պայմանները. քանի որ բոլոր դեպքերում թույլտվության պայմաններով կսահմանվեն մեծ հեռավորությունների վրա կամ անդրսահմանային աղտոտման նվազեցման վերաբերյալ դրույթներ և կապահովվի ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ ,

18. քանի որ անդամ պետություններն ինքնուրույն են որոշում, հարկ եղած դեպքում, թե ինչպես պետք է հաշվի առնել տվյալ օբյեկտի տեխնիկական բնութագրերը, դրա տեղակայման աշխարհագրական վայրը և շրջակա միջավայրի տեղական պայմանները,

19. քանի որ այն դեպքերում, երբ շրջակա միջավայրի որակի ստանդարտներով պահանջվում են առավել խիստ պայմաններ, քան այն պայմանները, որոնք կարող են ապահովվել առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, թույլտվությամբ կարող են նախատեսվել լրացուցիչ պայմաններ՝ չհակասելով մյուս միջոցներին, որոնք կարող են ձեռնարկվել՝ շրջակա միջավայրի որակի ստանդարտների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով,

20. քանի որ, առկա լավագույն տեխնոլոգիաները փոխվելու են ժամանակի ընթացքում՝ մասնավորապես տեխնիկական առաջընթացի արդյունքում, իրավասու մարմինները պետք է հետևեն այդ առաջընթացին կամ դրա մասին տեղեկացված լինեն,

21. քանի որ օբյեկտում տեղի ունեցող փոփոխությունները կարող են հանգեցնել աղտոտման առաջացմանը. քանի որ իրավասու մարմինը կամ մարմինները պետք է, այսպիսով, ծանուցվեն շրջակա միջավայրի վիճակի վրա հնարավոր ազդեցություն ունեցող բոլոր փոփոխությունների մասին. քանի որ ձեռնարկություններում զգալի փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է ստանալ սույն Հրահանգի համաձայն տրվող նախնական թույլտվություն,

22. քանի որ թույլտվության պայմանները պետք է պարբերաբար վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, արդիականացվեն. քանի որ որոշակի պայմաններից ելնելով, դրանք պետք է պարտադիր կերպով կրկնակի ուսումնասիրության ենթարկվեն,

23. քանի որ, օբյեկտների շահագործման և շրջակա միջավայրի վրա դրանց հնարավոր ազդեցության մասին հանրությանը տեղեկացնելու և Համայնքի տարածքում լիցենզավորման ընթացակարգի թափանցիկությունն ապահովելու համար, մինչ որևէ որոշում ընդունելը, հանրության համար պետք է մատչելի լինեն այն տեղեկությունները, որոնք առնչվում են նոր օբյեկտների կառուցման կամ գործող օբյեկտներում զգալի փոփոխություններ կատարելու թույլտվության ստացման համար դիմումներին, ինչպես նաև հենց թույլտվություններին, դրանց նորացմանը և համապատասխան մոնիտորինգի տվյալներին,

24. քանի որ հիմնական արտանետումների և դրանց աղբյուրների կադաստրի ստեղծումը կարող է կարևոր գործիք լինել, որը, մասնավորապես, ,հնարավորություն կտա համեմատելու Համայնքում աղտոտում առաջացնող գործողությունները. քանի որ նման կադաստրը կկազմվի Հանձնաժողովի կողմից, որի աշխատանքներին օժանդակում է կարգավորող կոմիտեն,

25. քանի որ Համայնքի մակարդակով առկա լավագույն տեխնոլոգիաների մասին տվյալների հավաքումը և փոխանակումը կնպաստի Համայնքում տեխնոլոգիական անհավասարակշռությունների վերացմանը, Համայնքում կիրառվող սահմանային արժեքների և տեխնոլոգիաների համաշխարհային մասշտաբով տարածմանն ու սույն Հրահանգի արդյունավետ իրականացման հարցում կօժանդակի անդամ պետություններին,

26. քանի որ սույն Հրահանգի իրականացման և դրա արդյունավետության մասին զեկույցները պետք է կազմվեն պարբերաբար ,

27. քանի որ սույն Հրահանգը վերաբերում է այն օբյեկտներին, որոնց առաջացրած աղտոտման պոտենցիալը, ուստի և անդրսահմանային աղտոտումը, զգալի մասշտաբներ ունի. քանի որ անհրաժեշտ է անդրսահմանային քննարկումներ կազմակերպել, եթե դիմումները վերաբերում են նոր օբյեկտների լիցենզավորմանը կամ գործող օբյեկտներում զգալի փոփոխություններ իրականացնելուն, որոնք կարող են հանգեցնել շրջակա միջավայրի վրա զգալի բացասական ազդեցության հնարավորությանը. քանի որ նման առաջարկներին կամ զգալի փոփոխություններին

վերաբերող դիմումները հասանելի կլինեն անդամ պետությունների հանրության համար, որը կարող է ենթարկվել նման ազդեցության,

28. քանի որ Համայնքի մակարդակով կարող է սահմանվել գործողություններ իրականացնելու անհրաժեշտություն, այն է՝ սահմանել արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներ սույն Հրահանգով նախատեսվող որոշակի կատեգորիայի օբյեկտների և աղտոտող նյութերի համար. քանի որ Խորհուրդը կսահմանի արտանետումների նման սահմանային թույլատրելի նորմաները՝ Պայմանագրի դրույթներին համապատասխան,

29. քանի որ սույն Հրահանգի դրույթները կիրառվում են՝ չհակասելով աշխատավայրում առողջության և անվտանգության մասին Համայնքի ակտերին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

#### **Նպատակը և գործողության ոլորտը**

Սույն Հրահանգի նպատակը I Հավելվածում թվարկված տնտեսական գործունեության հետևանքով առաջացող աղտոտման համալիր կանխարգելման և հսկողության ապահովումն է: Հրահանգով սահմանվում են գործունեության նշված տեսակների հետևանքով հող, մթնոլորտ և ջրային ռեսուրսներ կատարվող արտանետումների կանխարգելման, իսկ դրանց անհնարինության դեպքում՝ նվազեցման համար նախատեսված միջոցները, այդ թվում նաև՝ թափոններին վերաբերող միջոցները, շրջակա միջավայրի պաշտպանության ընդհանուր առմամբ բարձր մակարդակի ապահովման նպատակով՝ չհակասելով 85/337/ԵՏՀ հրահանգին և Համայնքի մյուս համապատասխան դրույթներին:

### *Հոդված 2*

#### **Սահմանումները**

Սույն Հրահանգի իմաստով՝

1. «նյութ» նշանակում է ցանկացած քիմիական տարր և դրա միացությունները, բացառությամբ ռադիոակտիվ նյութերի՝ 80/836/Եվրատոմ հրահանգի (8) իմաստով ու գենետիկորեն փոփոխված օրգանիզմների՝ 90/219/ԵՏՀ հրահանգի (9) և 90/220/ԵՏՀ (10) հրահանգի իմաստով.

2. «աղտոտում» նշանակում է մարդու գործունեության հետևանքով նյութերի, թրթռումների, ջերմության կամ աղմուկի ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը մթնոլորտի, ջրի կամ հողի վրա, որը կարող է վնասակար լինել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի որակի համար, վնաս հասցնել նյութական բարիքներին կամ շրջակա միջավայրի բաղադրիչների օգտակար հատկությունների և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը խոչընդոտելը.

3. «օբյեկտ» նշանակում է անշարժ տեխնիկական միավոր, որտեղ իրականացվում են I Հավելվածում նշված գործունեությունների մեկ կամ մի քանի տեսակներ և դրանց հետ ուղղակիորեն առնչվող գործունեության ցանկացած այլ տեսակներ, որոնք տեխնիկապես

կապված են տվյալ օբյեկտում իրականացվող գործունեությանը և որոնք կարող են ազդեցություն ունենալ արտանետումների և աղտոտման վրա.

4. «գործող օբյեկտ» նշանակում է շահագործվող օբյեկտ կամ, մինչև սույն Հրահանգն ուժի մեջ մտնելը, գործող օրենսդրության համաձայն թույլտվություն ստացած օբյեկտ կամ, ըստ իրավասու մարմնի, նման թույլտվության համալիր ընթացակարգի ենթակա օբյեկտ՝ պայմանով, որ օբյեկտի շահագործումը մեկնարկի սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու ամսաթվից ոչ ուշ, քան մեկ տարի անց.

5. «արտանետում» նշանակում է օբյեկտների կետային կամ ցրված աղբյուրներից նյութերի, թրթռումների, ջերմության կամ աղմուկի ուղղակի կամ անուղղակի արտազատում դեպի մթնոլորտ, ջրային ռեսուրսներ կամ հող.

6. «արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներ» նշանակում է արտանետումների կոնցենտրացիայի և (կամ) մակարդակի՝ կոնկրետ պարամետրերով արտահայտված գանգված, որը չի թույլատրվում գերազանցել մեկ կամ մի քանի ժամանակահատվածներում: Արտանետումների սահմանային թույլատրելի նորմաներ կարող են սահմանվել նաև նյութերի որոշակի խմբերի, ընտանիքների կամ կատեգորիաների համար, մասնավորապես, III հավելվածում թվարկվածների համար:

Նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները սովորաբար կիրառվում են այն կետում, որտեղից արտանետումները դուրս են գալիս օբյեկտից, ընդ որում, դրանց որոշման ժամանակ հաշվի չի առնվում նոսրացման ազդեցությունը:

Դեպի ջրային ռեսուրսներ անուղղակի արտազատումների մասով, օբյեկտի համար արտանետումների թույլատրելի սահմանային նորմաները որոշելիս կարող է հաշվի առնվել ջրի մաքրման կայանների ազդեցությունը՝ պայմանով, որ ընդհանուր առմամբ երաշխավորվի շրջակա միջավայրի պաշտպանության համարժեք մակարդակ և որ դա չի հանգեցնի շրջակա միջավայրի աղտոտման մակարդակի բարձրացմանը՝ չհակասելով 76/464/ԵՏՀ հրահանգին կամ այն կիրարկող հրահանգներին.

7. «շրջակա միջավայրի որակի ստանդարտ» նշանակում է պահանջների խումբ, որոնք պետք է ապահովվեն տվյալ շրջակա միջավայրում կամ դրա կոնկրետ մասում տվյալ ժամանակահատվածի ընթացքում՝ Համայնքի օրենսդրությանը համապատասխան.

8. «իրավասու մարմին» նշանակում է սույն Հրահանգից բխող պարտականությունների կատարման համար՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն պատասխանատու մարմին կամ մարմիններ, կամ գերատեսչություններ.

9. «թույլտվություն» նշանակում է գրավոր որոշման մաս կամ ամբողջական որոշում (կամ մի քանի այդպիսի որոշումներ), որով թույլատրվում է ամբողջ օբյեկտի կամ դրա մի մասի շահագործումը՝ որոշակի պայմանների պահպանմամբ, որոնցով երաշխավորվում է, որ օբյեկտը համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին: Թույլտվությունը կարող է վերաբերել նույն վայրում գտնվող և նույն օպերատորի կողմից շահագործվող մեկ կամ մի քանի օբյեկտներին կամ օբյեկտների մասերին:

10.

ա) «շահագործման պայմանների փոփոխություն» նշանակում է օբյեկտի հատկությունների կամ աշխատանքի փոփոխություն, կամ դրա ընդլայնում, որը կարող է հետևանքներ թողնել շրջակա միջավայրի վրա.

29) «զգալի փոփոխություն» նշանակում է օբյեկտի շահագործման պայմանների այսպիսի փոփոխություն, որը, իրավասու մարմնի գնահատմամբ, կարող է զգալի բացասական ներգործություն ունենալ մարդկանց կամ շրջակա միջավայրի վրա:

Սույն սահմանման նպատակներով շահագործման ցանկացած փոփոխություն կամ գործունեության ընդլայնում համարվում է էական, եթե նման փոփոխությունը կամ ընդլայնումն ինքնին հասնում է I հավելվածում սահմանված շեմերին, եթե այդպիսիք կան:

11. «առկա լավագույն տեխնոլոգիաներ» նշանակում է արտադրական գործունեության զարգացման և օբյեկտների շահագործման եղանակների առավել արդյունավետ և առաջավոր փուլ, որով՝ սկզբունքորեն, արտահայտվում է կոնկրետ տեխնոլոգիաների գործնական պիտանիությունը՝ արտանետումների սահմանային թույլատրելի նորմերի հաշվարկման համար, որոնք նախատեսված են արտանետումների կանխարգելման, իսկ անհնարինության դեպքում՝ կրճատման և շրջակա միջավայրի վրա դրանց ընդհանուր ազդեցության նվազեցման համար:

- «տեխնոլոգիաները» ներառում են և՛ կիրառվող տեխնոլոգիան, և՛ օբյեկտի նախագծման, կառուցման, պահպանման, շահագործման ու շահագործումից հանելու եղանակը:

- «առկա տեխնոլոգիաներ» նշանակում է այն տեխնոլոգիաները, որոնց զարգացման մակարդակը հնարավոր է դարձնում դրանց ներդրումը արդյունաբերության համապատասխան ոլորտում՝ հաշվի առնելով տնտեսական և տեխնիկական նպատակահարմարությունը, ծախսերը և շահույթները՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք կիրառվում կամ մշակվում են տվյալ անդամ պետության ներսում, այնքան ժամանակ, որքան դրանք հիմնավորված ձևով հասանելի են օպերատորի համար:

- «լավագույն» նշանակում է շրջակա միջավայրի պահպանության ընդհանուր բարձր մակարդակի ապահովման առումով առավել արդյունավետ:

Առկա լավագույն տեխնոլոգիաները սահմանելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել IV Հավելվածում բերված նկատառումներին:

12. «օպերատոր» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը շահագործում կամ ղեկավարում է օբյեկտը, կամ որին, ազգային օրենսդրությանը համապատասխան, օբյեկտի տեխնիկական գործառման մասով տրված են որոշակի տնտեսական իրավասություններ:

#### **▼M1**

13. «հանրություն» նշանակում է մեկ կամ մի քանի ֆիզիկական կամ իրավաբանական անձ, և ազգային օրենսդրության կամ գործելակերպի համաձայն, դրանց միությունները, կազմակերպությունները կամ խմբերը:

14. «շահագրգիռ հանրություն» նշանակում է հանրություն, որի վրա ազդեցություն ունի կամ կարող է հնարավոր ազդեցություն ունենալ թույլտվություն տալու կամ թույլտվության պայմանները նորացնելու մասին որոշման ընդունումը, կամ որը շահագրգռված է այդ որոշման ընդունման հարցում: Սույն սահմանման նպատակներով շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված գործունեություն իրականացնող և ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունները համարվում են շահագրգռվածություն ունեցող կողմեր:

#### **▼B**

### *Հոդված 3*

#### **Օպերատորի հիմնական պարտավորությունները կարգավորող ընդհանուր սկզբունքները**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու իրավասու մարմինների կողմից օբյեկտների շահագործումն այնպես, որ:



ա) իրականացվեն աղտոտման դեմ պայքարին ուղղված բոլոր համապատասխան կանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես, առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառմամբ.

բ) չառաջանա զգալի աղտոտվածություն.

գ) հնարավոր լինի խուսափել թափոնների գոյացումից՝ «Թափոնների մասին» Խորհրդի 1975 թվականի հուլիսի 15-ի 75/442/ԵՏՀ հրահանգի (11) համաձայն. թափոնների գոյացման դեպքում դրանք ենթարկվեն վերաօգտագործման, իսկ տեխնիկապես կամ տնտեսապես դրա անիրագործելիության դեպքում, հեռացվեն՝ բացառելով կամ նվազեցնելով շրջակա միջավայրի վրա ցանկացած ներգործություն.

դ) Էներգիան արդյունավետորեն օգտագործվի.

ե) անհրաժեշտ միջոցներ ձեռնարկվեն՝ վթարները կանխելու և դրանց հետևանքները մեղմացնելու համար.

զ) արտադրության վերջնական դադարեցման դեպքում ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աղտոտման ռիսկը բացառելու և աշխատանքների իրականացման վայրը բավարար վիճակի բերելու համար:

Սույն հոդվածի հետ համապատասխանության նպատակներով բավական է, որ անդամ պետությունները երաշխավորեն, որ թույլտվության պայմանները սահմանելիս իրավասու մարմինները հաշվի առնեն սույն հոդվածում նշված ընդհանուր սկզբունքները:

#### *Հոդված 4*

### **Նոր օբյեկտների համար թույլտվությունները**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ ոչ մի նոր օբյեկտ չչահագործվի առանց սույն Հրահանգի համապատասխան տրված թույլտվության՝ չհակասելով այն բացառություններին, որոնք նախատեսվում են «Այրման խոշոր կայաններից որոշակի աղտոտիչ նյութերի՝ մթնոլորտային օդ արտանետումների սահմանափակման մասին» Խորհրդի 1988 թվականի նոյեմբերի 24-ի 88/609/ԵՏՀ հրահանգով (12):

#### *Հոդված 5*

### **Գործող օբյեկտների շահագործման թույլտվության տրամադրման նկատմամբ կիրառվող պահանջները**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմինները 6-րդ և 8-րդ հոդվածների համաձայն նշված թույլտվությունների տրման միջոցով կամ, եթե կիրառելի է, վերանայման միջոցով և, անհրաժեշտության դեպքում, թույլտվությամբ նախատեսվող պայմանների արդիականացման միջոցով, քայլեր ձեռնարկեն, որ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո ոչ ուշ, քան ութ տարի գործող օբյեկտները շահագործվեն 3-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ հոդվածների, 14-րդ և 15(2) հոդվածների առաջին և երկրորդ պարբերություններում առկա պահանջներին համապատասխան՝ չհակասելով Համայնքի համապատասխան օրենսդրությանը:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ 1-ին, 2-րդ, 11-րդ, 12-րդ հոդվածների, 14-րդ հոդվածի երրորդ պարբերության, 15(1), (3) և (4) հոդվածի, 16-րդ, 17-րդ ու 18 (2) հոդվածների դրույթները գործող օբյեկտների նկատմամբ կիրառելու համար՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

## Հոդված 6

### Թույլտվություն ստանալու դիմումները

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ իրավասու մարմին ներկայացված՝ թույլտվություն ստանալու դիմումի մեջ նկարագրված լինի հետևյալը՝

- օբյեկտը և այնտեղ իրականացվող գործունեությունը,
- օբյեկտի կողմից օգտագործվող կամ արտադրվող հումքը և օժանդակ նյութերը, մյուս նյութերն ու էներգիան,
- օբյեկտից դուրս եկող արտանետումների աղբյուրները,
- օբյեկտի տեղակայման վայրում առկա պայմանները,
- օբյեկտից յուրաքանչյուր միջավայր դուրս եկող կանխատեսելի արտանետումների բնույթը և ծավալը, ինչպես նաև շրջակա միջավայրի վրա արտանետումների զգալի ազդեցությունների որոշումը,
- առաջարկվող տեխնոլոգիաները և կանխարգելման այլ մեթոդներ՝ օբյեկտից արտանետումները կանխելու կամ, դրա անհնարինության դեպքում, նվազեցնելու համար,
- անհրաժեշտության դեպքում, օբյեկտի կողմից ստացվող թափոնների գոյացման կանխարգելմանը և դրանց վերաօգտագործմանն ուղղված միջոցները,
- 3-րդ հոդվածով նախատեսվող օպերատորի հիմնական պարտավորությունների կատարման ընդհանուր սկզբունքներին համապատասխանելու համար նախատեսվող հետագա միջոցները,
- շրջակա միջավայր արտանետումների մոնիտորինգի համար ծրագրվող միջոցները,

#### ▼M1

- հիմնական այլընտրանքային տարբերակների ընդհանուր նկարագրությունը, եթե այդպիսիք կան, որոնք ուսումնասիրվել են դիմումատուի կողմից:

#### ▼B

Թույլտվություն ստանալու մասին դիմումը պետք է ներառի նաև վերոնշյալ պարբերություններում նախատեսված մանրամասն տվյալների ոչ տեխնիկական ամփոփ նկարագրությունը:

Այն դեպքերում, երբ 85/337/ԵՏՀ հրահանգով նախատեսվող պահանջներին համապատասխան տրամադրված տեղեկությունները կամ «Արտադրական գործունեության որոշ տեսակների իրականացման ժամանակ խոշոր վթարների վտանգների մասին» խորհրդի 1982 թվականի հունիսի 24-ի 82/501/ԵՏՀ հրահանգի ([13](#)) համաձայն կազմված անվտանգության մասին զեկույցը կամ այլ օրենսդրական ակտերի համաձայն կազմված ցանկացած այլ տեղեկություն բավարարում է սույն հոդվածի պահանջներից որևէ մեկը, նման տեղեկությունը կարող է ներառվել դիմումի մեջ կամ ներկայացվել դրան կից:

## *Հոդված 7*

### **Թույլտվությունների տրման նկատմամբ միասնական մոտեցումը**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ թույլտվությամբ նախատեսվող պայմանները և դրա տրման ընթացակարգն ամբողջովին համաձայնեցվեն, եթե տվյալ ընթացակարգում ընդգրկված է մեկ կամ ավելի իրավասու մարմին՝ այդ ընթացակարգում ներգրավված բոլոր իրավասու մարմինների կողմից արդյունավետ միասնական մոտեցման կիրառում երաշխավորելու նպատակով:

## *Հոդված 8*

### **Որոշումների ընդունումը**

Չհակասելով ազգային կամ Համայնքի օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների՝ իրավասու մարմինը թույլտվություն է տրամադրում, որի մեջ նշվում են այն պայմանները, որոնք երաշխավորում են օբյեկտի համապատասխանությունը սույն Հրահանգի պահանջներին, իսկ նշված պահանջներին օբյեկտի անհամապատասխանության դեպքում իրավասու մարմինը մերժում է թույլտվություն տրամադրելը:

Բոլոր տրված թույլտվությունները և այն թույլտվությունները, որտեղ փոփոխություններ են կատարվել, պետք է ներառեն մթնոլորտի, ջրի և հողի պաշտպանության համար նախատեսված միջոցների մանրամասն նկարագրությունը, ինչպես նշված է սույն Հրահանգում:

## *Հոդված 9*

### **Թույլտվության պայմանները**

1. Մթնոլորտի, ջրային և հողային ռեսուրսների պաշտպանության միջոցով ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակի ապահովման նպատակով անդամ պետություններն ապահովում են, որ թույլտվության մեջ ընդգրկվեն բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ 3-րդ և 10-րդ հոդվածներում նշված պահանջներին համապատասխանությունն ապահովելու համար:

2. Նոր օբյեկտի շահագործման կամ գործող օբյեկտներում էական փոփոխությունների դեպքում, երբ կիրառվում է 85/337/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածը, թույլտվությունը տրամադրելիս հաշվի է առնվում այդ հրահանգի 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածներին համապատասխան ստացված ցանկացած համապատասխան տեղեկատվություն կամ եզրակացություն:

3. Թույլտվության մեջ պետք է ներառվեն աղտոտող՝ մասնավորապես III հավելվածում նշված, այն նյութերի արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները, որոնք հնարավոր է զգալի քանակություններով արտանետվեն օբյեկտից հաշվի առնելով դրանց բնույթը և մեկ միջավայրից մյուսը (ջուր, օդ և հող) աղտոտումը փոխանցելու դրանց կարողությունը: Հարկ եղած դեպքում, թույլտվության մեջ պետք է ներառվեն հողի և ստորգետնյա ջրերի պաշտպանությունն ապահովող համապատասխան պահանջները, ինչպես նաև օբյեկտի կողմից արտադրվող թափոնների կառավարմանն ուղղված միջոցները: Անհրաժեշտության դեպքում, թույլատրելի սահմանային նորմաները կարող են լրացվել կամ փոխարինվել համարժեք պարամետրերով կամ տեխնիկական միջոցներով/չափումներով:

I հավելվածի 6.6 ենթավերնագրում նշված օբյեկտների համար սույն պարբերության համաձայն սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի նորմերը պետք է սահմանվեն՝ հաշվի առնելով օբյեկտների տվյալ կատեգորիաներին վերաբերող գործնական դիտարկումները:

#### **▼M2**

Եթե օբյեկտից դուրս եկող ջերմոցային գազերը նշված են Համայնքի ներսում ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների առևտրի մեխանիզմների համակարգը սահմանող և Խորհրդի 96/61/ԵՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հոկտեմբերի 13-ի 2003/87/ԵՀ հրահանգի 1-ին հավելվածում՝ կապված տվյալ օբյեկտում իրականացվող արտադրական գործունեության հետ, թույլտվությունը չպետք է ներառի տվյալ գազի անմիջական արտանետումների համար սահմանված թույլատրելի սահմանային նորմը, եթե դա անհրաժեշտ չէ՝ ապահովելու համար, որ տեղական մասշտաբով զգալի աղտոտվածություն չառաջանա:

2003/87/ԵՀ I Հրահանգի հավելվածում նշված աշխատանքների համար անդամ պետությունները այրման կայանների կամ շրջակա միջավայր ածխաթթու գազ արտանետող այլ կայանների համար կարող են էներգետիկ արդյունավետության պահանջներ չսահմանել:

Իրավասու մարմինները, ըստ անհրաժեշտության, փոփոխում են թույլտվությունը:

Նախորդ երեք ենթապարբերությունը չի կիրառվում այն օբյեկտների նկատմամբ, որոնք ժամանակավորապես դուրս են մնացել Համայնքի ներսում ջերմոցային գազերի արտանետումների քվոտաների առևտրի մեխանիզմների համակարգից՝ 2003/87/ԵՀ հրահանգի 27-րդ հոդվածի համաձայն:

#### **▼B**

4. Չհակասելով 10-րդ հոդվածին՝ 3-րդ պարբերության մեջ նշված արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները և համարժեք պարամետրերն ու տեխնիկական միջոցները/չափումները հիմնված են առկա լավագույն տեխնոլոգիաների վրա՝ առանց նախատեսելու որևէ մեթոդի կամ կոնկրետ տեխնոլոգիայի կիրառումը, բայց հաշվի առնելով համապատասխան օբյեկտի տեխնիկական բնութագրերը, տվյալ օբյեկտի տեղակայման աշխարհագրական վայրը և շրջակա միջավայրի տեղական պայմանները: Բոլոր դեպքերում թույլտվության պայմաններով պետք է մեծ հեռավորությունների վրա կամ անդրսահմանային աղտոտման նվազեցման մասին դրույթներ սահմանվեն կամ ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի համար բարձր մակարդակ ապահովվի:

5. Թույլտվությունը պետք է ներառի արտազատումների համապատասխան մոնիտորինգի պահանջները՝ նշելով չափումների մեթոդաբանությունն ու պարբերականությունը, գնահատման ընթացակարգը և թույլտվության պայմանների հետ համապատասխանությունը ստուգելու համար իրավասու մարմիններին անհրաժեշտ տվյալները տրամադրելու պարտավորությունը:

I հավելվածի 6.6 ենթավերնագրում նշված օբյեկտների դեպքում սույն պարբերության մեջ նշված միջոցների համար կարող են հաշվի առնվել ծախսերն ու եկամուտները:

6. Թույլտվության մեջ նշվում են այն միջոցները, որոնք վերաբերում են բնականոն շահագործման պայմաններից բացի այլ պայմաններին: Այսպիսով, եթե առկա է շրջակա միջավայրի վրա ներգործության ռիսկ, ապա միջոցներ պետք է նախատեսվեն՝ գործարկման, հոսակորուստների, անսարքիությունների, ժամանակավոր խափանումների և աշխատանքների վերջնական դադարեցման դեպքերի համար:

Թույլտվությունը կարող է նաև 4-րդ պարբերության պահանջներից ժամանակավոր շեղումներ պարունակել, եթե իրավասու մարմնի կողմից հաստատված վերականգնման ծրագրով ապահովվում է, որ այդ պահանջները կբավարարվեն վեց ամսվա ընթացքում, և եթե ծրագիրը նպաստում է ադոտոտման նվազեցմանը:

7. Թույլտվության մեջ կարող են նշվել սույն Հրահանգի նպատակներով այնպիսի կոնկրետ պայմաններ ևս, որոնք նպատակահարմար կհամարվեն անդամ պետության կամ իրավասու մարմնի կողմից:

8. Չհակասելով սույն Հրահանգի համաձայն թույլտվությունների տրամադրման ընթացակարգն իրականացնելու պարտավորությանը՝ անդամ պետությունները կարող են սահմանել որոշակի պահանջներ որոշակի կատեգորիաների օբյեկտների համար որպես ընդհանուր պարտադիր կանոններ՝ դրանք առանձին թույլտվություններում ներառելու փոխարեն, պայմանով, որ կապահովվի միասնական մոտեցում և շրջակա միջավայրի պաշտպանության ընդհանուր առմամբ բարձր մակարդակ:

#### *Հոդված 10*

### **Առկա լավագույն տեխնոլոգիաները և շրջակա միջավայրի որակի ստանդարտները**

Եթե շրջակա միջավայրի որակի ստանդարտներով պահանջվում են առավել խիստ պայմաններ, քան նրանք, որոնք կարող են ապահովվել առկա լավագույն տեխնոլոգիաների կիրառմամբ, թույլտվությամբ՝ մասնավորապես առանց հակասելու մյուս միջոցներին, ապա պետք է պահանջվեն լրացուցիչ միջոցներ, որոնք կարող են ձեռնարկվել՝ շրջակա միջավայրի որակի ստանդարտների հետ համապատասխանությունն ապահովելու համար:

#### *Հոդված 11*

### **Առկա լավագույն տեխնոլոգիաների գծով առաջընթացը**

Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմինները հետևեն առկա լավագույն տեխնոլոգիաների գծով առաջընթացին կամ դրանց մասին տեղեկություններ ստանան:

#### *Հոդված 12*

### **Օպերատորների կողմից օբյեկտներում կատարվող փոփոխությունները**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ օպերատորը իրավասու մարմիններին տեղեկացնի օբյեկտի շահագործման գծով նախատեսվող բոլոր փոփոխությունների մասին, ինչպես նշված է 2(10)(ա) հոդվածում: Անհրաժեշտության դեպքում, իրավասու մարմինները պետք է նորացնեն թույլտվությունը կամ դրանով նախատեսված պայմանները:

2. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ 2(10)(բ) հոդվածի իմաստով՝ օպերատորի կողմից նախատեսվող որևէ էական փոփոխություն չկատարվի օբյեկտի շահագործման պայմաններում առանց սույն Հրահանգի համաձայն տրված թույլտվության: Թույլտվություն ստանալու դիմումի և իրավասու մարմնի որոշման մեջ պետք է նշվեն օբյեկտի այն մասերը և 6-րդ հոդվածում նշված այն հայեցակետերը, որոնց

վրա փոփոխությունը կարող է ազդել: Երրորդ հոդվածի, 6-10-րդ հոդվածների և 15(1), (2) ու (4) հոդվածի դրույթները կիրառվում են համապատասխան փոփոխություններով:

### *Հոդված 13*

#### **Իրավասու մարմնի կողմից թույլտվության պայմանների վերանայումը և նորացումը**

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ իրավասու մարմինները պարբերաբար վերանայեն և, անհրաժեշտության դեպքում, նորացնեն թույլտվության պայմանները:

2. Պարտադիր վերանայումն իրականացվում է, եթե՝

- օբյեկտից առաջացող աղտոտումն այնքան զգալի է, որ առաջացնում է առկա թույլտվությամբ նախատեսվող՝ արտանետումների սահմանային թույլատրելի նորմաների վերանայման կամ թույլտվության մեջ սահմանային թույլատրելի նոր նորմաներ ներառելու անհրաժեշտություն.

- առկա լավագույն տեխնոլոգիաներում էական փոփոխություններն առանց չափազանց մեծ ծախսերի հնարավորություն են տալիս զգալիորեն կրճատելու արտանետումները.

- արտադրական պրոցեսի կամ աշխատանքների տեխնիկական անվտանգության համար պահանջվում է այլ տեխնոլոգիաների կիրառում.

- այդպես է պահանջվում Համայնքի կամ ազգային օրենսդրության նոր դրույթներով:

### *Հոդված 14*

#### **Թույլտվության պայմանների հետ համապատասխանությունը**

Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ պայմաններ՝ ապահովելու, որ՝

- օպերատորը օբյեկտի շահագործման ժամանակ պահպանի թույլտվությամբ նախատեսվող պայմանները.

- օպերատորը պարբերաբար տեղեկացնի իրավասու մարմնին արտանետումների նկատմամբ մոնիտորինգի արդյունքների մասին և անհապաղ հայտնի ցանկացած վթարի կամ պատահարի մասին, որն զգալիորեն ազդում է շրջակա միջավայրի վրա.

- օբյեկտների օպերատորներն իրավասու մարմնի ներկայացուցիչներին օժանդակեն նրանց կողմից օբյեկտում ստուգումներ անցկացնելիս, նմուշներ վերցնելիս և ցանկացած տեղեկություն հավաքելիս, որն անհրաժեշտ է՝ սույն Հրահանգի նպատակներով իրենց պարտականությունների կատարման համար:

## Հոդված 15

### Տեղեկությունների մատչելիությունը և հասարակության մասնակցությունը թույլտվություն տալու ընթացակարգին

#### ▼M1

1. Անդամ պետություններն ապահովում են, որ շահագրգիռ հանրությանը ժամանակին և արդյունավետորեն հնարավորություն տրվի մասնակցություն ունենալու ստորև նշված ընթացակարգերին՝

- նոր օբյեկտների համար թույլտվության տրամադրում.

- օբյեկտի շահագործման մեջ ցանկացած էական փոփոխության համար թույլտվության տրամադրում.

- 13-րդ հոդվածի 2-րդ պարբերության առաջին պարբերության համաձայն՝ օբյեկտի համար թույլտվության կամ թույլտվության պայմանների նորացում:

V հավելվածում նշված ընթացակարգը կիրառվում է նման մասնակցության ապահովման նպատակներով:

#### ▼B

2. Արտագատումների մոնիտորինգի արդյունքները, որոնք պարտադիր են 9-րդ հոդվածում նշված թույլտվության պայմանների համաձայն և իրականացվում են իրավասու մարմինների կողմից, պետք է մատչելի լինեն հանրության համար:

#### ՈՄ4

#### ▼B

4. Առաջին, երկրորդ և երրորդ պարբերությունները կիրառվում են՝ հաշվի առնելով 90/313/ԵՏՀ հրահանգի 3(2) և (3) հոդվածում սահմանված սահմանափակումները:

#### ▼M1

5. Որոշումն ընդունելուց հետո իրավասու մարմինը, սահմանված ընթացակարգերի համաձայն, այդ մասին տեղեկացնում է հանրությանը և տվյալ հանրության համար մատչելի է դարձնում հետևյալ տեղեկությունները՝

ա) որոշման բովանդակությունը, այդ թվում նաև՝ թույլտվության և թույլտվության պայմանների պատճենն ու հերթական նորացված պայմանները, և

բ) ուսումնասիրելով շահագրգիռ հասարակության ներկայացրած մտահոգություններն ու կարծիքները՝ այն հիմնավորումներն ու նկատառումները, որոնց հիման վրա ընդունվել է որոշումը, այդ թվում նաև՝ տեղեկություններ հանրության մասնակցության վերաբերյալ:

## Հոդված 15ա

### Արդարադատության մատչելիությունը

Անդամ պետություններն ապահովում են, որ ազգային համապատասխան իրավական համակարգի համաձայն, շահագրգիռ հանրության այն անդամները՝

ա) ովքեր ունեն բավարար շահագրգռվածություն կամ,

բ) որոնց իրավունքները խախտվել են, եթե դա պահանջվում է անդամ պետության վարչական դատավարության իրավունքով՝ որպես նախապայման՝

կարողանան օգտվել դատարանում կամ օրենքով ստեղծված մեկ այլ անկախ և անկողմնակալ մարմնում քննության հնարավորությունից՝ որոշումների, գործողությունների կամ անգործության նյութական կամ ընթացակարգային իրավունքի նորմերի օրինականությունը բողոքարկելու նպատակով՝ սույն Հրահանգով նախատեսվող՝ հանրային մասնակցության վերաբերյալ դրույթների համաձայն:

Անդամ պետությունները որոշում են, թե որ փուլում կարող են բողոքարկվել որոշումները, գործողությունները կամ անգործությունը:

Այն, թե որն է համարվում բավարար շահագրգռվածություն և իրավունքների խախտում, սահմանվում է անդամ պետությունների կողմից՝ հաշվի առնելով արդարադատության մատչելիության համար շահագրգռ հասարակությանը լայն հնարավորություններ տալու նպատակն իրագործելու անհրաժեշտությունը: Այդ իսկ նպատակով 2(14) հոդվածում նշված պահանջները բավարարող հասարակական կազմակերպությունների շահագրգռվածությունը՝ սույն հոդվածի (ա) ենթապարբերության նպատակով, դիտվում է որպես բավարար: Համարվում է, որ նման կազմակերպությունների իրավունքները նույնպես կարող են խախտվել՝ սույն հոդվածի (բ) ենթապարբերության նպատակով:

Սույն հոդվածի դրույթներով չի բացառվում վարչական մարմնի կողմից նախնական քննության հնարավորությունը և այն չի ազդում վարչական կարգով քննության հնարավորությունների սպառման պահանջի վրա, եթե նման պահանջ ներկայացվում է ազգային իրավունքով:

Ցանկացած նման ընթացակարգ պետք է լինի արդար, իրականացվի՝ ելնելով կողմերի հավասարության սկզբունքից, խելամիտ ժամկետներում և մատչելի:

Սույն հոդվածի դրույթների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անդամ պետություններն ապահովում են, որ հասարակությանը մատչելի լինեն վարչական և դատական կարգով քննության ընթացակարգերի մասին գործնական տեղեկությունները:

## **▼B**

### *Հոդված 16*

#### **Տեղեկությունների փոխանակումը**

1. Տեղեկությունների փոխանակման նպատակով անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որ երեք տարին մեկ անգամ, իսկ առաջին անգամ՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո 18 ամսվա ընթացքում, Հանձնաժողով ուղարկվեն I Հավելվածի համաձայն, ըստ աշխատանքների կոնկրետ կատեգորիաների սահմանված՝ արտանետումների թույլատրելի սահմանային նորմերի և, անհրաժեշտության դեպքում, առկա լավագույն այն տեխնոլոգիաների մասին ներկայացուցչական տվյալները, որոնց հիման վրա՝ մասնավորապես 9-րդ հոդվածի համաձայն, սահմանվել են նշված նորմերը: Հետագա դեպքերում տվյալները պետք է լրացվեն՝ սույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգերի համաձայն:

2. Հանձնաժողովը կազմակերպում է, որ անդամ պետությունների և արդյունաբերական ընկերությունների միջև տեղեկություններ փոխանակվեն՝ առկա լավագույն տեխնոլոգիաների, դրանց հետ կապված մոնիտորինգային ընթացակարգերի և դրանց



կատարելագործման մասին: Հանձնաժողովը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ հրապարակում է տեղեկությունների փոխանակման արդյունքները:

3. Սույն Հրահանգի իրականացման և Համայնքի բնապահպանական այլ գործիքների համեմատությամբ դրա արդյունավետության մասին զեկույցները կազմվում են 91/692/ԵՏՀ հրահանգի 5-րդ և 6-րդ հոդվածներում սահմանված կարգի համաձայն: Առաջին զեկույցում պետք է ներառվեն այն երեք տարիները, որոնք հաջորդում են սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու օրվան, ինչպես սահմանված է 21-րդ հոդվածում: Հանձնաժողովը զեկույցը ներկայացնում է Խորհուրդ՝ անհրաժեշտության դեպքում կից ներկայացված առաջարկություններով:

4. Անդամ պետությունները հիմնում կամ նշանակում են մարմին կամ մարմիններ, որոնք պատասխանատու են՝ 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն տեղեկություններ փոխանակելու համար, և համապատասխանաբար այդ մասին տեղեկացնում են Հանձնաժողովին:

### *Հոդված 17*

#### **Անդրսահմանային ազդեցությունները**

##### **▼M1**

1. Եթե անդամ պետությունը տեղյակ է, որ որևէ օբյեկտի շահագործումը կարող է բացասական ազդեցություն ունենալ մեկ այլ անդամ պետության շրջակա միջավայրի վրա, կամ եթե զգալի ազդեցության ենթարկվելու հավանականություն ունեցող որևէ անդամ պետություն նման պահանջ է ներկայացնում, ապա այն անդամ պետությունը, որի տարածքում, 4-րդ կամ 12(2) հոդվածների համաձայն թույլտվություն ստանալու դիմում է ներկայացվել, մյուս անդամ պետությանն է տրամադրում V հավելվածի համաձայն պահանջվող կամ տրամադրված տեղեկությունները միաժամանակ, երբ դրա մասին տեղեկացնում է իր իսկ քաղաքացիներին: Այդ տեղեկությունները հիմք են՝ երկկողմ հարաբերությունների շրջանակներում երկու անդամ պետությունների միջև փոխադարձության և համարժեքության հիման վրա անցկացվող ցանկացած քննարկումների համար:

##### **▼B**

2. Երկկողմ հարաբերությունների շրջանակներում անդամ պետություններն ապահովում են, որ 1-ին պարբերության մեջ նշված դեպքերում դիմումները համապատասխան ժամկետներում մատչելի դարձվեն՝ ազդեցությանը ենթարկվելու հավանականություն ունեցող անդամ պետության հանրության համար այնպես, որ այն կարողանա օգտվել իր կարծիքը հայտնելու իրավունքից՝ նախքան իրավասու մարմնի կողմից որոշում ընդունելը:

##### **▼M1**

3. Առաջին և երկրորդ պարբերությունների համաձայն անցկացված քննարկումների արդյունքները պետք է հաշվի առնվեն՝ դիմումի վերաբերյալ իրավասու մարմնի կողմից որոշումն ընդունելու ժամանակ:

4. Իրավասու մարմինը դիմումի վերաբերյալ կայացրած որոշման մասին տեղեկացնում է այն անդամ պետությանը, որի հետ, 1-ին պարբերության համաձայն, քննարկումներ են անցկացվել, և նրան է ուղարկում 15(5) հոդվածում նշված տեղեկությունները: Այդ անդամ պետությունը միջոցներ է ձեռնարկում՝ ապահովելու, որ նշված տեղեկությունները պատշաճ կերպով մատչելի լինեն այդ պետության տարածքի շահագրգիռ հանրության համար:

**▼B**

*Հոդված 18*

**Համայնքի՝ արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները**

1. Խորհուրդը, գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկության հիման վրա, Պայմանագրով սահմանված ընթացակարգին համապատասխան, սահմանում է արտանետումների սահմանային թույլատրելի նորմաները՝

- I հավելվածում նշված օբյեկտների կատեգորիաների համար՝ բացառությամբ այդ հավելվածի 5.1 և 5.4 կատեգորիաներում ընդգրկված աղբավայրերի.

— և

- III հավելվածում նշված աղտոտող նյութերի համար.

որոնց մասով առաջացել է Համայնքի կողմից գործողություններ ձեռնարկելու անհրաժեշտություն մասնավորապես, 16-րդ հոդվածով նախատեսվող տեղեկությունների փոխանակման հիման վրա:

2. Սույն Հրահանգի համաձայն սահմանված արտանետումների սահմանային թույլատրելի՝ Համայնքի նորմաների բացակայության դեպքում, I Հավելվածում նշված օբյեկտների նկատմամբ՝ որպես արտանետումների սահմանային թույլատրելի նվազագույն նորմաներ, սույն Հրահանգի համաձայն, կիրառվում են II Հավելվածում թվարկված հրահանգներով և Համայնքի այլ իրավական ակտերով նախատեսվող՝ արտանետումների սահմանային թույլատրելի համապատասխան նորմաները:

Չհակասելով սույն Հրահանգի պահանջներին՝ I Հավելվածի 5.1 և 5.4 կատեգորիաներում ներառված աղբավայրերի նկատմամբ ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանվում են Խորհրդի կողմից՝ Հանձնաժողովի կողմից ստացված առաջարկությունների հիման վրա՝ Պայմանագրով սահմանված ընթացակարգերի համաձայն:

**▼M3**

*Հոդված 19*

**Կոմիտեի աշխատակարգը**

1. Հանձնաժողովի աշխատանքներին օժանդակում է կոմիտեն:

2. Երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ([15](#)) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր աշխատանքային կանոնակարգը:

**▣B**

*Հոդված 20*

**Անցումային դրույթներ**

1. 84/360/ԵՏՀ հրահանգի, 76/464/ԵՏՀ հրահանգի 3-րդ, 5-րդ, 6(3) և 7(2) հոդվածների դրույթներն ու II հավելվածում թվարկված հրահանգներում նշված՝ թույլտվություն տալու ընթացակարգերին վերաբերող համապատասխան դրույթները, չհակասելով 88/609/ԵՏՀ հրահանգով նախատեսվող բացառություններին, կիրառվում են գործող օբյեկտների նկատմամբ՝ I հավելվածում նշված աշխատանքների հետ կապված, մինչ սույն Հրահանգի 5-

րդ հողվածի համաձայն պահանջվող միջոցների՝ իրավասու մարմինների կողմից ձեռնարկելը:

2. Առաջին պարբերության մեջ նշված հրահանգներում թույլտվություն տալու ընթացակարգերին վերաբերող համապատասխան դրույթները չեն կիրառվում այն օբյեկտների նկատմամբ, որոնք սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ նոր են սկսել զբաղվել I Հավելվածում նշված արտադրական գործունեությամբ:

3. 84/360/ԵՏՀ Հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելու պահից 11 տարի անց:

Օբյեկտի նկատմամբ 4-րդ, 5-րդ կամ 12-րդ հողվածում նշված միջոցները կիրառելուց անմիջապես 76/464/ԵՏՀ հրահանգի 6 (3) հողվածում նշված բացառությունն այլևս չի կիրառվում սույն Հրահանգով նախատեսվող օբյեկտների նկատմամբ:

Խորհուրդը, գործելով Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա, անհրաժեշտության դեպքում փոփոխում է II Հավելվածում նշված հրահանգների համապատասխան դրույթները՝ սույն Հրահանգի պահանջներին դրանք հարմարեցնելու նպատակով՝ նախքան 1-ին ենթապարբերության մեջ նշված 84/360/ԵՏՀ հրահանգն ուժը կորցնելը:

#### *Հոդված 21*

##### **Ուժի մեջ մտնելը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը ոչ ուշ, քան Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Անդամ պետությունների կողմից նշված ակտերի ընդունման դեպքում դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում դրանք պետք է ուղեկցվեն նման հղումով: Այդպիսի հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնադրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

#### *Հոդված 22*

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո 20-րդ օրը:

#### *Հոդված 23*

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

---

ՀԱՎԵԼՎԱԾ I

1-ԻՆ ՀՈՂՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԸ

1. Սույն Հրահանգը չի վերաբերում այն օբյեկտներին կամ օբյեկտների մասերին, որոնք օգտագործվում են նոր արտադրանքի և պրոցեսների գիտահետազոտական ուսումնասիրության, նախագծման և փորձարկման համար:
  
2. Ստորև ներկայացված շեմային նորմաները հիմնականում վերաբերում են արտադրական հզորություններին կամ արտադրության ծավալներին: Եթե մեկ օպերատոր իրականացնում է նույն ենթակատեգորիային վերաբերող գործունեության մի քանի տեսակներ նույն օբյեկտում կամ նույն արտադրական տարածքում, ապա արտադրական գործունեության այդ տեսակների հզորությունները գումարվում են:
  1. Էներգետիկ 1.1. 50 ՄՎտ-ը գերազանցող նումինալ ջերմային հզորությամբ այրման արդյունաբերու- կայաններ ([16](#))  
թյան ճյուղեր
  
  - 1.2. Նավթի և գազի մշակման գործարաններ
  
  - 1.3. Կոքսի վառարաններ
  
  - 1.4. Քարածխի գազացման և հեղուկացման գործարաններ
  
2. Մետաղների 2.1. Մետաղների հանքաքարերի (ներառյալ ծծմբային հանքաքարի) արտադրու- թրծման կամ այրման սարքավորումներ  
թյուն և  
վերամշակում
  
- 2.2. Չուգունի կամ պողպատի արտադրման (առաջնային կամ երկրորդային հալում), ինչպես նաև շարունակական ձուլման կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը մեկ ժամում գերազանցում է 2,5 տոննան
  
- 2.3. Սև մետաղների վերամշակման օբյեկտներ
  - ա) գլանման հաստոցներ, որոնք մեկ ժամում արտադրում են 20 տոննայից ավելի չմշակված պողպատ,
  - բ) դարբնոցներ, որոնց մուրճերից յուրաքանչյուրի էներգիան գերազանցում է 50

կիլոջոուլը, երբ օգտագործվող ջերմատվությունը գերազանցում է 20 ՄՎտ–ը

գ) ձուլված մետաղական պաշտպանիչ ծածկերի օգտագործում, որոնց օգնությամբ մեկ ժամում արտադրվում է ավելի քան 2 տոննա պողպատ

2.4. Սև մետաղների ձուլման արտադրամասեր, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 20 տոննան

2.5. Օբյեկտներ

ա) հանքաքարերից, կոնցենտրատներից կամ երկրորդական հումքից մետաղագործական, քիմիական կամ էլեկտրոլիտիկ պրոցեսների միջոցով գունավոր չմշակված մետաղների արտադրության համար.

բ) գունավոր մետաղների, այդ թվում՝ վերականգնված արտադրանքի (վերամշակում, երկաթապատում և այլն) հալման, ինչպես նաև ձուլման համար, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 4 տոննան՝ կապարի և կադմիումի համար, իսկ մյուս բոլոր մետաղների համար՝ 20 տոննան:

2.6. Էլեկտրոլիտիկ կամ քիմիական գործընթացների միջոցով մետաղների և պլաստմասսայի նախնական վերամշակման կառուցվածքներ, երբ վերամշակման ցիստեռների ծավալը գերազանցում է 30 մ3-ը:

3. Հանքարդյու– 3.1. Օբյեկտներ՝ պտտվող վառարաններում ցեմենտի կլինկերի թրծման նաբերություն համար, որոնց արտադրողականությունը օրական կտրվածքով գերազանցում է 500 տոննան, կամ պտտվող վառարաններում կրի արտադրության համար, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան, կամ այլ վառարանների օգտագործմամբ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան:

3.2. Օբյեկտներ՝ ասբեստի և ասբեստ պարունակող արտադրանքի արտադրության համար:

3.3. Ապակու, ինչպես նաև ապակե մանրաթելի արտադրման կառուցվածքներ, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան:

3.4. Հանքային նյութերի հալման՝ ներառյալ հանքային մանրաթելի արտադրության օբյեկտներ, որոնց հալման հզորությունը գերազանցում է օրական 20 տոննան:

3.5. Կերամիկական ապրանքների, մասնավորապես՝ ծածկի կղմինդրի, աղյուսի, հրակայուն աղյուսի, կղմինդրի, կավե ամանեղենի կամ ճենապակու արտադրման

կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 75 տոննան, և (կամ) որոնց վառարանների ծավալը գերազանցում է 4 մ3-ը, իսկ ցանկացած վառարանի խտությունը գերազանցում է 300 կգ/մ3-ը:

4. Քիմիական արտադրություն  
Մույն մասում նշված գործունեության տեսակների իմաստով արտադրությունը նշանակում է արտադրություն՝ արդյունաբերական ծավալներով 4.1-ից 4.6 կետերում թվարկված նյութերի կամ նյութերի խմբերի քիմիական վերամշակման միջոցով:

4.1. Քիմիական կոմբինատներ՝ հիմնական օրգանական քիմիական նյութերի արտադրության համար, ինչպիսիք են՝

- ա) պարզ ածխաջրածինները (կանոնավոր կամ ցիկլային, հազեցած կամ չհազեցած, ալիֆատիկ կամ արոմատիկ).
- բ) թթվածին պարունակող ածխաջրածինները, ինչպիսիք են սպիրտը, ալդեհիդները, կետոնները, կարբոնաթթուները, եթերները, ագետատները, դիէթիլային եթերները, պերօքսիդները, էպօքսիդային խեժը.
- գ) ծծմբային ածխաջրածինները.
- դ) ազոտական ածխաջրածինները, ինչպիսիք են ամինները, ամիդները, ազոտային միացությունները, նիտրոմիացությունները, նիտրիլները, ցիանատները, իզոցիանատները.
- դ) ֆոսֆոր պարունակող ածխաջրածինները.
- ե) հալոգեն ածխաջրածինները.
- զ) մետաղաօրգանական միացությունները.
- է) պլաստմասսա (պոլիմերներ, սինթետիկ մանրաթել և թաղանթանյութ).
- ը) սինթետիկ կաուչուկը.
- թ) ներկանյութերը և պիգմենտները.
- ժ) մակերևութաակտիվ նյութերը:

4.2. Քիմիական կոմբինատներ՝ հիմնական անօրգանական քիմիական նյութերի արտադրության համար, ինչպիսիք են՝

ա) գազերը, ինչպիսիք են ամոնիակը, քլորը կամ քլորաջրածինը, ֆտորը կամ ֆտորաջրածինը, ածխածնի օքսիդը, ծծմբային միացությունները, ազոտի օքսիդները, ջրածինը, ծծմբային անհիդրիդը, կարբոնիլ քլորիդը.

բ) թթուները, ինչպիսիք են քրոմաթթուն, ֆտորաջրածնային թթուն, ֆոսֆորային թթուն, ազոտական թթուն, քլորաջրածնային թթուն, ծծմբաթթուն, օլեումը/ (ծխացող ծծմբաթթուն), ծծմբավոր թթուները.

բ) հիմքերը, ինչպիսիք են ամոնիումի հիդրօքսիդը, կալիումի հիդրօքսիդը, նատրիումի հիդրօքսիդը.

դ) աղերը, ինչպիսիք են ամոնիումի քլորիդը, կալիումի քլորատը, կալիումի կարբոնատը, նատրիումի կարբոնատը, պերբորատը, արծաթի նիտրատը.

ե) ոչ մետաղները, ինչպիսիք են մետաղի օքսիդները կամ այլ անօրգանական միացություններ, ինչպիսիք են կալցիումի կարբիդը, սիլիցիումը, սիլիցիումի կարբիդը.

4.3. Քիմիական կոմբինատներ՝ ֆոսֆորի, ազոտի կամ կալիումի հիմքով պարարտանյութերի արտադրության համար (պարզ կամ բարդ պարարտանյութեր):

4.4. Քիմիական կոմբինատներ՝ բույսերի առողջության պահպանման հիմնական արտադրանքների և բիոցիդների արտադրության համար:

4.5. Կոմբինատներ՝ քիմիական կամ կենսաբանական գործընթացների կիրառմամբ հիմնական դեղագործական արտադրանքի արտադրության համար:

4.6. Քիմիական կոմբինատներ՝ պայթուցիկ նյութերի արտադրության համար:

#### 5. Թափոնների կառավարում

Չհակասելով «Վտանգավոր թափոնների մասին» 75/442/ԵՏՀ հրահանգի 11-րդ հոդվածին կամ Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/689/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածին ([17](#)):

5.1. Վտանգավոր թափոնների հեռացման կամ վերականգնման՝ 91/689/ԵՏՀ հրահանգի 1(4) հոդվածում նշված ցանկով սահմանված, 75/442/ԵՏՀ հրահանգի II (Ա) հավելվածում և II (Բ) հավելվածում (Գործողություններ R1, R5, R6, R8 և R9) ու «Նավթի թափոնների հեռացման մասին» Խորհրդի 1975 թվականի հունիսի 16-ի 75/439/ԵՏՀ հրահանգում ([18](#)) սահմանված կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 10 տոննան:

5.2. Կենցաղային թափոնների այրման կայանները, ինչպես սահմանված է «Կենցաղային թափոնների այրման նոր կայաններից մթնոլորտի աղտոտումը կանխելու մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 8-ի 89/369/ԵՏՀ հրահանգում ([19](#)) և «Կենցաղային թափոնների այրման գործող կայաններից օդի աղտոտումը նվազեցնելու մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 21-ի 89/429/ԵՏՀ հրահանգով ([20](#)), օրական 3 տոննան գերազանցող արտադրողականությամբ:

5.3. 75/442/ԵՏՀ հրահանգի II Ա հավելվածում D8 և D9 վերնագրերով սահմանված՝ ոչ վտանգավոր թափոնների հեռացման կառուցվածքներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան:

5.4. Աղբավայրեր, որտեղ կուտակվում է օրական 10 տոննա թափոն, կամ որի ընդհանուր տարողունակությունը գերազանցում է 25 000 տոննան՝ բացառությամբ իներտ թափոնների համար նախատեսված աղբահորերի:

6. Արտադրական գործունեության այլ տեսակներ
- 6.1. Արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք նախատեսված են՝
- ա) փայտանյութից կամ այլ թելավոր նյութերից ցելյուլոզայի արտադրության համար.
  - բ) օրական 20 տոննան գերազանցող արտադրողականությամբ՝ թղթի և ստվարաթղթի արտադրության համար:
- 6.2. Գործարաններ՝ թելերի և տեքստիլի նախնական մշակման (լվացում, գունաթափում, մերսերացում) կամ ներկման համար, որոնց վերամշակման ծավալը գերազանցում է օրական 10 տոննան:
- 6.3. Գործարաններ՝ մորթիների և կաշիների ներկման համար, որտեղ օրական մշակվում է ավելի քան 12 տոննա պատրաստի արտադրանք:
- 6.4. ա) մսեղիքի արտադրման սպանդանոցներ, որոնց արտադրողականությունը գերազանցում է օրական 50 տոննան
- բ) մշակում և վերամշակում սննդամթերքի արտադրության համար հետևյալից՝ կենդանական ծագման հումքից (բացառությամբ կաթի)՝ օրական ավելի քան 75 տոննա պատրաստի արտադրանքի արտադրողականությամբ.
- բուսական ծագման հումքից՝ օրական ավելի քան 300 տոննա պատրաստի արտադրանքի արտադրողականությամբ ( միջին ցուցանիշ՝ եռամսյա կտրվածքով):
- Կաթի մշակում և վերամշակում, եթե մեկ օրվա ընթացքում ստացված կաթի քանակը գերազանցում է 200 տոննան (միջին ցուցանիշ՝ տարեկան կտրվածքով):
- 6.5. Կենդանիների մսեղիքի և կենդանական թափոնների հեռացման ու վերամշակման համար կառուցվածքներ, որոնց վերամշակման ծավալը գերազանցում է օրական 10 տոննան:
- 6.6. Թռչունների կամ խոզերի՝ ժամանակակից ինտենսիվ տեխնոլոգիաներով բուծման համար ֆաբրիկաներ, որոնք ունեն ավելի քան՝
- ա) 40000 տեղ՝ ընտանի թռչունների համար.
  - բ) 2,000 տեղ՝ խոզերի բուծման համար (30 կգ-ից ավելի) համար, կամ տեղ՝ խոզամայրերի համար:
- 6.7. Նյութերի, առարկաների կամ օրգանական լուծիչներ պարունակող արտադրանքների նախնական մշակման, մասնավորապես՝ հղկման, տպագրման, երեսպատման, ճարպահեռացման, անջրանցիկության ապահովման, չափսերի որոշման, ներկման, մաքրման կամ հագեցման համար նախատեսված



կառուցվածքներ, որոնց սպառման ծավալը գերազանցում է ժամում 150 կգ-ը կամ տարեկան 200 տոննան:

6.8. Մոխրացման և գրաֆիտացման միջոցով ածխի կամ էլեկտրոգրաֆիտի արտադրության կառուցվածքներ:

---

ՀԱՎԵԼՎԱԾ II

18(2) և 20-րդ հոդվածներում նշված հրահանգների ցանկը

1. «Շրջակա միջավայրի՝ ասբեստի միջոցով աղտոտումը կանխելու և նվազեցնելու մասին» 87/217/ԵՏՀ հրահանգ
2. «Ալկալիական էլեկտրոլիզի արդյունաբերության սեկտորում սնդիկի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» 82/176/ԵՏՀ հրահանգ
3. «Կադմիումի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» 83/513/ԵՏՀ հրահանգ
4. «Ալկալիական էլեկտրոլիզի արդյունաբերությունից բացի այլ սեկտորներում սնդիկի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» 84/156/ԵՏՀ հրահանգ
5. «Հեքսաքլորցիկլոհեքսանի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» 84/491/ԵՏՀ հրահանգ
6. 76/464/ԵՏՀ հրահանգի հավելվածի 1-ին ցանկում ընդգրկված՝ «Որոշակի վտանգավոր նյութերի արտանետումների սահմանաքանակների և որակի պահանջների մասին» 86/280/ԵՏՀ հրահանգ, որը հետագայում փոփոխվել է 86/280/ԵՏՀ հրահանգի II հավելվածը փոփոխող 88/347/ԵՏՀ և 90/415/ԵՏՀ հրահանգներով:
7. «Կենցաղային թափոնների այրման նոր կայաններից մթնոլորտի աղտոտումը կանխելու մասին» 89/369/ԵՏՀ հրահանգ
8. «Կենցաղային թափոնների այրման՝ գոյություն ունեցող կայաններից մթնոլորտի աղտոտումը կանխելու մասին» 89/429/ԵՏՀ հրահանգ
9. Վտանգավոր թափոնների այրման մասին 94/67/ԵՀ հրահանգ
10. «Տիտանի օքսիդի արդյունաբերության թափոններից առաջացող աղտոտման նվազեցման և վերջնական վերացման ծրագրերի ներդաշնակեցման ընթացակարգերի մասին» 92/112/ԵՏՀ հրահանգ:
11. «Խոշոր այրման կայաններից որոշակի աղտոտիչ նյութերի՝ դեպի մթնոլորտ արտանետումների սահմանափակման մասին» վերջին անգամ 94/66/ԵՀ հրահանգով

փոփոխված 88/609/ԵՏՀ հրահանգ

12. «Համայնքի ջրային միջավայր արտանետված որոշակի վտանգավոր նյութերից առաջացող աղտոտման մասին» 76/464/ԵՏՀ հրահանգ
13. «Թափոնների մասին» 75/442/ԵՏՀ հրահանգ՝ 91/156/ԵՏՀ հրահանգով փոփոխված
14. «Նավթի թափոնների հեռացման մասին» 75/439/ԵՏՀ հրահանգ
15. «Վտանգավոր թափոնների մասին» 91/689/ԵՏՀ հրահանգ

---

*ՀԱՎԵԼՎԱԾ III*

**ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՑԱՆԿ, ՈՐՈՆՔ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՑԻՆ ԹՈՒՑԼԱՏՐԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼԻՍ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆՎԵՆ**

**ՄԹՆՈԼՈՐՏ**

1. Ծծմբի երկօքսիդ և այլ ծծմբային միացություններ
2. Ազոտի օքսիդներ և այլ ազոտային միացություններ
3. Շմոլ գազ
4. Ցնդող օրգանական միացություններ
5. Մետաղներ և դրանց միացությունները
6. Փոշի
7. Ասբեստ (օղ բարձրացած/կախված մասնիկներ, թելեր)
8. Քլոր և դրա միացությունները
9. Ֆտոր և դրա միացությունները
10. Արսենիում և դրա միացությունները
11. Ցիանիդներ
12. Նյութեր և պատրաստուկներ, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկանիշների առկայությունը, կամ այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնք օղի միջոցով կարող են ազդել վերարտադրողականության վրա:
13. Պոլիքլորինացված դիբենզոդիօքսին և պոլիքլորինացված դիբենզոֆուրան

## ՋՈՒՐ

1. Օրգանահալոցեն միացություններ և նյութեր, որոնք ջրային ավազանում կարող են կազմել նման միացություններ
2. Օրգանաֆոսֆորային միացություններ
3. Մանգանի միացություններ
4. Նյութեր և պատրաստուկներ, որոնցում հաստատվել է քաղցկեղածին կամ մուտագեն հատկանիշների առկայությունը, կամ այնպիսի հատկանիշների առկայությունը, որոնք ջրային ավազանում կամ դրա միջոցով կարող են ազդել վերարտադրողականության վրա:
5. Կայուն ածխաջրածիններ և կայուն ու կենսակուտակման հատկանիշով օժտված օրգանական թունավոր նյութեր
6. Ցիանիդներ
7. Մետաղներ և դրանց միացությունները
8. Արսենիում և դրա միացությունները
9. Բիոցիդներ և բույսերի առողջության պահպանման արտադրանքներ
10. Օդ բարձրացած/կախված նյութեր
11. Նյութեր, որոնք առաջ են բերում ճահճացում (մասնավորապես՝ նիտրատներ և ֆոսֆատներ)
12. Նյութեր, որոնք բացասաբար են ազդում թթվածնային հավասարակշռության վրա (և կարող են չափվել՝ կիրառելով այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են թթվածնի կենսաբանական պահանջը (ԹԿՊ), թթվածնի քիմիական պահանջը (ԹՔՊ) և այլն)

#### ՀԱՎԵԼՎԱԾ IV

Նկատառումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝ ընդհանրապես կամ 2(11) հոդվածում նշված լավագույն առկա տեխնոլոգիաները սահմանելիս՝ հաշվի առնելով որևէ միջոցի հնարավոր ծախսերը և օգուտներն ու նախագգուշացման և կանխման սկզբունքները՝

1. քիչ թափոններով տեխնոլոգիաների օգտագործումը.
2. նվազ վտանգավոր նյութերի օգտագործումը.
3. անհրաժեշտության դեպքում, պրոցեսի արդյունքում առաջացած կամ օգտագործված նյութերի և թափոնների վերականգնման կամ վերամշակման խրախուսումը.
4. համեմատական պրոցեսները, սարքավորումները կամ շահագործման մեթոդները, որոնք արդյունաբերության մեջ հաջողությամբ կիրառվել են.
5. տեխնոլոգիական առաջընթացը և գիտելիքների ու գիտական ընկալման փոփոխությունները.
6. համապատասխան արտանետումների բնույթը, ազդեցությունները և ծավալը.
7. նոր կամ գոյություն ունեցող օբյեկտների գործարկման օրերը.
8. առկա լավագույն տեխնոլոգիաները ներդնելու համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը.
9. պրոցեսում օգտագործվող հումքի (այդ թվում՝ ջրի) սպառումն ու բնույթը և էներգետիկ արդյունավետությունը.
10. շրջակա միջավայրի վրա արտանետումների ազդեցությունը և դրանց վտանգները կանխելու կամ նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունը.
11. վթարները կանխելու և շրջակա միջավայրի համար դրանց հետևանքները նվազեցնելու անհրաժեշտությունը.
12. Հանձնաժողովի կողմից՝ 16(2) հոդվածի համաձայն, կամ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակված տեղեկությունները:

[DM1](#)

**Որոշումների ընդունման գործընթացում հանրային մասնակցությունը**

1. Հանրությունը (պաշտոնական ծանուցագրերով կամ համապատասխան այլ միջոցներով, առկայության դեպքում օրինակ՝ էլեկտրոնային տարբերակով), նախքան թույլտվության տրամադրման ընթացակարգի մեկնարկը կամ ամենաուշը՝ տեղեկատվությունը պատշաճ կերպով ներկայացվելու համար անհրաժեշտ հիմնավորված ժամկետում, պետք է տեղեկացվի հետևյալի մասին՝

ա) թույլտվություն ստանալու մասին դիմումը կամ, ելնելով կոնկրետ դեպքից, 15(1) հոդվածի համաձայն թույլտվության կամ թույլտվության պայմանների նորացման առաջարկությունը, այդ թվում նաև՝ 6(1) հոդվածում նշված տարրերի նկարագրությունը.

առեղիության դեպքում, այն փաստը, որ թույլտվության համար դիմումին վերաբերող որոշումը կայացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության ազգային կամ միջսահմանային գնահատումից կամ անդամ պետությունների միջև քննարկումներից հետո՝ 17-րդ հոդվածին համապատասխան.

իշման ընդունման համար պատասխանատու այն իրավասու մարմինների տվյալները, ումից կարելի է համապատասխան տեղեկություններ ստանալ, և ում կարելի է դիտորություններ կամ հարցեր ներկայացնել, ինչպես նաև դիտորություններ կամ հարցեր ներկայացնելու համար սահմանված ժամանակացույցի մանրամասները.

արվոր որոշումների բնույթը կամ, առկայության դեպքում, որոշման նախագծի բնույթը,

իրառելիության դեպքում՝ տեղեկություններ թույլտվության կամ թույլտվության պայմանների նորացման մասին առաջարկի առնչությամբ.

ում ժամկետների և այն վայրերի մասին, որտեղ և որոնց միջոցով համապատասխան տեղեկությունները մատչելի կլինեն.

ւեղեկություններ սույն հոդվածի 5-րդ պարբերության համաձայն հանրային մասնակցությանն ուղղված միջոցառումների մասին:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ հետևյալը համապատասխան ժամկետներում մատչելի լինի հասարակությանը՝

լգային օրենսդրությանը համապատասխան՝ իրավասու մարմին կամ մարմիններին փոխանցված հիմնական հաշվետվությունները և նրանց տրված խորհրդատվությունն այն ժամանակահատվածում, երբ շահագրգիռ հանրությունը տեղեկացված էր՝ 1-ին կետին համապատասխան.

րջակա միջավայրի մասին տեղեկությունների հանրային մատչելիության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի 2003/4/ԵՀ հրահանգի (8) դրույթների համաձայն, սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկություններից բացի այլ տեղեկություններ, որոնք առնչվում են 8-րդ հոդվածի համաձայն ընդունված որոշման հետ և, որոնք դառնում են մատչելի միայն այն ժամանակահատվածից հետո, երբ շահագրգիռ հանրությունը տեղեկացված էր՝ 1-ին կետին համապատասխան:

3. Շահագրգիռ հանրությունն իրավունք ունի դիտորություններ և կարծիքներ

ներկայացնելու իրավասու մարմին՝ նախքան որոշում կայացնելը:

4. Սույն հավելվածի համաձայն անցկացված քննարկումների արդյունքները պետք է որոշում կայացնելիս պատշաճորեն հաշվի առնվեն :
5. Հանրությանը տեղեկացնելու (օրինակ՝ որոշակի տարածքում պաստառների տեղադրման կամ տեղական թերթերում հրապարակումների միջոցով) և շահագրգիռ հանրության հետ քննարկում անցկացնելու (օրինակ՝ գրավոր դիմումների կամ հանրային հարցումների միջոցով) համար մանրամասն միջոցառումները սահմանվում են անդամ պետությունների կողմից: Տարբեր փուլերի համար հիմնավորված ժամկետներ են նախատեսվում՝ բավականաչափ ժամանակ տրամադրելով հանրությանը կամ շահագրգիռ հանրությանը տեղեկացնելու համար՝ պատրաստվելու և արդյունավետորեն մասնակցելու համար սույն հոդվածի դրույթների համաձայն շրջակա միջավայրի մասին որոշումների կայացման գործում:

---

(1) ՊՏ թիվ C 311, 17. 11. 1993թ., էջ 6 և ՊՏ թիվ C 165, 01. 07. 1995թ., էջ 9:

(2) ՊՏ թիվ C 195, 18. 07. 1995թ., էջ 54:

(3) Եվրոպական պառլամենտի 1994 թվականի դեկտեմբերի 14-ի եզրակացություն (ՊՏ թիվ C 18, 23. 01. 1995թ., էջ 96), Խորհրդի 1995 թվականի նոյեմբերի 27-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ թիվ C 87, 25. 03. 1996թ., էջ 8), և Եվրոպական պառլամենտի 1996 թվականի մայիսի 22-ի որոշում (ՊՏ թիվ C 166, 10. 06. 1996թ.):

(4) ՊՏ թիվ C 138, 17. 05. 1993թ., էջ 1:

(5) ՊՏ թիվ L 188, 16. 07. 1984թ., էջ 20: 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 377, 31. 12. 1991թ., էջ 48):

(6) ՊՏ թիվ L 129, 18. 05. 1976թ., էջ 23: Վերջին անգամ թիվ 91/692/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ:

(7) ՊՏ թիվ L 175, 05. 07. 1985թ., էջ 40:

( 8 ) «Իոնացնող ճառագայթման վտանգներից լայն հասարակության և աշխատողների առողջության պաշտպանության համար անվտանգության հիմնական ստանդարտներ սահմանող հրահանգները փոփոխելու մասին» Խորհրդի 1980 թվականի հուլիսի 15-ի թիվ 80/836/Եվրատոմ հրահանգ (ՊՏ թիվ L 246, 17. 09. 1980թ., էջ 1): 84/467/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 265, 05. 10. 1984թ., էջ 4):

( 9 ) «Գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմների սահմանափակ օգտագործման մասին» Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի 90/219/ԵՏՀ հրահանգ (ՊՏ թիվ L 117, 08. 05. 1990թ., էջ 1): Հանձնաժողովի 94/51/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 297, 18. 11. 1994թ., էջ 29):

( 10 ) «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների՝ շրջակա միջավայր միտումնավոր արտազատման մասին» Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի 90/220/ԵՏՀ հրահանգ (ՊՏ թիվ L 117, 08. 05. 1990թ., էջ 15): Հանձնաժողովի 94/15/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 103, 22. 04. 1994թ., էջ 20):



- (11) ՊՏ թիվ L 194, 25. 07. 1975թ., էջ 39: 91/692/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 377, 31. 12. 1991թ., թիվ 48):
- (12) ՊՏ թիվ L 336, 07. 12. 1988թ., էջ 1: 90/656/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 353, 17. 12. 1990թ., էջ 59):
- (13) ՊՏ թիվ No L 230, 05. 08. 1982թ., էջ 1: 91/692/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 377, 31. 12. 1991թ., էջ 48):
- (14) ՊՏ L 275, 25.10.2003թ., էջ 32:
- (15) Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող` Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ, էջ 23):
- (16) Գործող օբյեկտների համար 88/609/ԵՏՀ հրահանգի նյութական պահանջները դեռ կիրառվում են մինչև 2003 թվականի դեկտեմբերի 31-ը:
- (17) ՊՏ թիվ L 377, 31. 12. 1991թ., էջ 20: 94/31/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 168, 02. 07. 1994թ., էջ 28):
- (18) ՊՏ թիվ L 194, 25. 07. 1975թ., էջ 23: 91/692/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 377, 31. 12. 1991թ., էջ 48):
- (19) ՊՏ թիվ L 163, 14. 06. 1989թ., էջ 32:
- (20) ՊՏ թիվ L 203, 15. 07. 1989թ., էջ 50:
- (21) ՊՏ L 41, 14.02.2003թ., էջ 26: